

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/2

27 սեպտեմբերի 2016թ.

Քննարկվեց «Գեպոտանիք» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱՏՄ պետի տեղակալի 11.07.2016թ. թիվ 0172 որոշման դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱՏՄ պետի տեղակալը, ուսումնասիրելով «Գեպոտանիք» ՍՊԸ կողմից 2015թ. մարտի 18-ին թիվ C 7274 ապրանքների հայտարարագրով «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպված սև մետաղյա ցինկապատ հարթ թիթեղների մաքսային ձևակերպման փաստաթղթերը և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱՏՄ գանձումների համակարգման և հաշվառման բաժնի մաքսային տեսուչի կողմից կազմված տեղեկանքով ներկայացված հաշվարկը, որի համաձայն «Գեպոտանիք» ՍՊԸ կողմից թիվ C 7274 ապրանքների հայտարարագրով հայտարարագրված ապրանքների համար 11.07.2016թ. դրությամբ հակազնագցման տուրքի գծով ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա պարտավորությունը կազմում է 18.754.294 դրամ, 11.07.2016թ. կայացրել է մաքսային վճարների գանձման վերաբերյալ թիվ 0172 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում):

Որոշման համաձայն «Գեպոտանիք» ՍՊԸ-ից հոգուտ պետական բյուջեի գանձման է առաջադրվել 18.754.294 դրամ հակազնագցման տուրքի գումար:

Նշվեց նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարի 16.09.2015թ. թիվ 0008 հանձնարարականի համաձայն «Գեպոտանիք» ՍՊԸ-ում իրականացվել է 01.01.2015թ.ց մինչև 01.09.2015թ. ընկած ժամանակահատվածում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7210 ապրանքային դիրքով ՀՀ ներմուծված և հայտարարագրված ապրանքներին վերաբերվող տեղեկությունները, հակադեմպինգային տուրքերի վճարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ հետբացթողումային հսկողության վարչության 29.10.2015թ. արտագնա մաքսային ստուգման թիվ 0012 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

Ակտով մասնավորապես արձանագրվել է, որ թիվ C 7274 ՄՀ-ով ՀՀ ներմուծված ապրանքը հանդիսանում է սև մետաղյա հարթ թիթեղներ՝ պոլիմերային ծածկույթով երկկողմանի պատված (երկկողմանի ներկված), և ենթակա էր 20,2% հակադեմպինգային տուրքով հարկման: Խախտվել է Մաքսային Միության մաքսային օրենսգրքի 188 և 189 հոդվածների պահանջները՝ հայտարարագրվել է ապրանքի ոչ ճիշտ նկարագրություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը ՀՀ ՖՆ հետբացթողումային հսկողության վարչության պետի ժ/պ կողմից 29.10.2015թ. կայացվել է մաքսային գործի ոլորտում թիվ 0012 որոշումը, որով ընկերությանը վճարման է առաջադրվել ընդամենը 25.083.868 դրամի չափով հակադեմպինգային տուրք և տույժ:

«Գեպոտանիք» ՍՊԸ կողմից 08.02.2016թ. հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ՖՆ հետբացթողումային հսկողության վարչության

29.10.2015թ. արտագնա մաքսային ստուգման թիվ 0012 ակտը և որպես հետևանք ՀՀ ՖՆ հետքացթողումային հսկողության վարչության պետի ժ/պ մաքսային գործի ոլորտում 29.10.2015թ. թիվ 0012 որոշումը վերացնելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանի 15.02.2016թ. թիվ ՎԴ/0691/05/16 որոշման համաձայն նշված հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱՏՄ պետի տեղակալի 11.07.2016թ. թիվ 0172 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններն անմիջականորեն բխում են ՀՀ ՖՆ հետքացթողումային հսկողության վարչության 29.10.2015թ. արտագնա մաքսային ստուգման թիվ 0012 ակտի հիման վրա ՀՀ ՖՆ հետքացթողումային հսկողության վարչության պետի ժ/պ կողմից 29.10.2015թ. ընդունված թիվ 0012 որոշումից, Որոշման կատարումը ևս ենթակա է կասեցման, մինչև թիվ ՎԴ/0691/05/16 գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱՏՄ պետի տեղակալի 11.07.2016թ. թիվ 0172 որոշման կատարումը կասեցնել, մինչև թիվ ՎԴ/0691/05/16 գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ